Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
մարտի 20-ի N 310-Ն որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են խաղային գործունեության կազմակերպման և անցկացման կանոնակարգի (այսուհետ՝ կանոնակարգ) հաստատման հետ կապված հարաբերությունները:

2. Հասկացություններն օգտագործվում են «Խաղային գործունեության կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված իմաստով:

3. Կանոնակարգը ներկայացվում է լիցենզիա ստանալու հայտի հետ միասին:

4. Կազմակերպիչը նոր կանոնակարգերը կամ կանոնակարգում կատարվող փոփոխությունները կամ լրացումները նախքան դրանց կիրառումը սույն ընթացակարգով սահմանված կարգով ներկայացնում է Լիազոր մարմնի հաստատմանը:

5. Կազմակերպիչը հաստատման նպատակով կանոնակարգը էլեկտրոնային եղանակով ներկայացնում է Լիազոր մարմնին: Լիազոր մարմնին ներկայացված կանոնակարգը միաժամանակ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացվում է Վերահսկող մարմնին և Խաղային գործունեության կարգավորման օպերատորին:

6. Կանոնակարգը ներկայացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերենով, «Յունիկոդ» կոդավորմամբ տառատեսակով:

7. Կանոնակարգում պարտադիր նշվում են օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները:

8. Կանոնակարգը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում դրանք ներկայացնելու պահանջը համարվում է կատարված, եթե անձը տեղեկատվական համակարգում համացանցի միջոցով լրացնում է դիմումի համար անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթուղթը հաստատում է էլեկտրոնային ստորագրության միջոցով: Կանոնակարգը՝ սույն ընթացակարգով սահմանված մարմիններում մուտքագրված լինելու փաստը հավաստվում է նույն աշխատանքային օրվա ընթացքում՝ հետադարձ ծանուցմամբ, որը պարունակում է 12-նիշանոց ծածկագիր:

9. Լիազոր մարմինը սույն ընթացակարգով սահմանված կարգով կանոնակարգը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում քննում է դրանք:

10. Լիազոր մարմնի կողմից մեկամսյա ժամկետում բացասական եզրակացություն չտրամադրվելու դեպքում դրական եզրակացությունը համարվում է տրված:

11. Ընթացակարգով սահմանված մարմինները կանոնակարգը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում ներկայացնում են դրական կամ բացասական դիրքորոշում կանոնակարգերը հաստատելու կամ մերժելու կամ տեխնիկական թերությունների առկայության մասին: Վերահսկող մարմինը և Խաղային գործունեության կարգավորման օպերատորն իրենց դիրքորոշումները սույն կետով սահմանված ժամկետում տրամադրում են Լիազոր մարմնին:

12. Եթե ընթացակարգով սահմանված մարմինների կողմից կանոնակարգի հաստատման վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն, ապա կանոնակարգը համարվում է հաստատված: Լիազոր մարմինը 3-օրյա ժամկետում Կազմակերպչին է տրամադրում կանոնակարգի հաստատված օրինակը:

13. Եթե ընթացակարգով սահմանված մարմինների կամ մեկ մարմնի կողմից ներկայացվել է բացասական դիրքորոշում, ապա կանոնակարգի հաստատման հարցը ենթակա է քննարկման խաղային գործունեության կազմակերպման լիցենզավորող հանձնաժողովում (այսուհետ՝ հանձնաժողով) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված կարգով:

14. Եթե սահմանված մարմինների կամ մեկ մարմնի կողմից ներկայացվել է դիրքորոշում տեխնիկական թերությունների առկայության մասին, ապա այդ մասին

Լիազոր մարմինը տեղեկացնում է Կազմակերպչին, առաջարկելով 5 օրվա ընթացքում ներկայացնել ուղղված կանոնակարգը, որից հետո Լիազոր մարմինը 10-օրյա ժամկետում Կազմակերպչին է տրամադրում կանոնակարգի հաստատված օրինակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ